

ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԱԼԵԶՈՒ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

*DOI:10.24234/journalforarmenianstudies.v4i63.76*

**Ամփոփում**

Հոդվածում ուսումնասիրում ենք 19-րդ դարի հայալեզու պարբերականների լեզվաքաղաքականությունը, որը բնորոշվել է տարբեր լեզվական միջավայրերում ձևավորված թարգմանական միտումների և սկզբունքների ազդեցությամբ և արտացոլվել գրական թարգմանություններում: Հայկական համայնքների համար բարդագույն աշխարհաքաղաքական իրավիճակներում որոշակի դրական կրթամշակութային տեղաշարժեր էին ապահովվել, որոնց շնորհիվ զարգանում է պարբերական մամուլը: Բացվում են դպրոցներ և կրթական գործն իրականացնելու համար աշխարհիկ գրականությունն ստեղծելու անհրաժեշտություն է առաջանում, հատկապես մանկապատանեկան տարիքի ընթերցողների համար: Թարգմանական մեծ ավանդույթներ ունեցող հայ գիտական միտքը, ինքնուրույն նոր գրականություն ստեղծելուն զուգընթաց, դիմում է նաև համաշխարհային արժեքավոր գործերի թարգմանություններին և դրանց հայացմանը:

Միջգիտակարգային մոտեցմամբ քննվել են մի շարք պարբերականների, խմբագիրների և թարգմանիչների հոդվածներն ու աշխատությունները, որոնք արտացոլում են նրանց հայացքները նախ գրաբարից աշխարհաբար անցման, ապա արևելահայերենի և արևմտահայերենի զարգացման վերաբերյալ: Տարբեր միջավայրերի ազդեցությամբ, մի կողմից, պարբերականները նպաստել են համաշխարհային գրականության առնչությունների զարգացմանը, մյուս կողմից, արտաքին և ներքին գործոններով պայմանավորված, թարգմանական գրականությունը վավերացրել է լեզվի գրապատմական զարգացման ընթացքը:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Լեզվաքաղաքականություն, պարբերականներ, թարգմանական գրականություն, մանկապատանեկան, հայերեն, գրաբար, արևելահայերեն, արևմտահայերեն, թարգմանություն:

**Ներածություն**

Հայալեզու պարբերականների առաջացման և հայկական դպրոցների բացմանը զուգընթաց, 19րդ դարի սկիզբը հատկանշվում է թարգմանական

գրականության զարգացմամբ, որն ընթանում է տարբեր լեզվամշակութային միջավայրերում: Հայաստանի թարգմանական ավանդույթները և հայերի ներդրումը համաշխարհային գրականության լավագույն նմուշների թարգմանության և պահպանման գործում գնահատելով՝ Ջարպիանայանը գրում է՝ «...ընտրելագույն երկասիրութիւնները թարգմանելով, ամենէն աւելի իմաստուն գրոց աւանդապահ ըրին զՀայաստան աշխարհ» (8): Հաշվի առնելով, որ մամուլն առաջացավ և զարգացավ հայկական գաղթօջախներում, որտեղ հայերը տիրապետում էին նաև օտար լեզուների («Ազգերնուս մասնատր բարեմասնութեանց մէկն ալ՝ օտար լեզուաց մէջ յառաջադէմ յաջողակութիւնն է» (8), թվում էր, թե գրական թարգմանությունների գործն առավել դյուրին կլիներ:

Գրականության ուսումնասիրությունն ինքնին հնարավորություն է ընձեռում վավերացնել լեզվի գրապատմական զարգացման ընթացքը, իսկ տարբեր օտար լեզուների միջավայրում ձևավորվող թարգմանական գրականության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս դիտարկել որոշակի թարգմանական միտումները: Սույն հոդվածում դիտարկում ենք հայալեզու պարբերականների լեզվաքաղաքականությունը գրական թարգմանությունների օրինակով և տարբեր լեզվական միջավայրերում ձևավորված թարգմանական միտումները: Ինչպես կտեսնենք, հայալեզու պարբերականների խմբագիրները և թղթակիցները հիմնականում հստակ արտահայտել են իրենց դիրքորոշումն այս գրապայքարում մինչև արևելահայերենի և արևմտահայերենի որոշակի կանոնարկման փուլի անցումը:

### **Մեթոդաբանությունը**

Գրականագիտական մեթոդի միջոցով քննվել են 19-րդ դարում լույս տեսած մի շարք պարբերականների և դրանց խմբագիրների հոդվածներն ու աշխատությունները, որոնք արտացոլում են նրանց հայացքները լեզվական խնդիրների առնչությամբ: Ուսումնասիրվել են, թե ինչով են պայմանավորված նրանց տեսակետները, և ինչ ազդեցություն են ունեցել հայերենի զարգացման վրա: Այս համատեքստում կիրառվել է նաև պատմական մեթոդը, որի միջոցով փորձ է արվել առանձնացնել տարբեր հոդվածներում և ուսումնասիրություններում առկա պատմաքաղաքական և սոցիալ կրթական գործոնները, որոնք ունեցել են որոշակի ազդեցություն ստեղծվող գրականության բովանդակային և լեզվական կողմի վրա: Օգտվելով ճանաչված հայ գրականագետների և տեսաբանների ուսումնասիրություններից՝ ներկայացրել ենք նաև խնդրո առարկայի առնչությամբ ներկայացրած իրենց դիտարկումները:

**Քննարկում**

Թարգմանական գրականության լեզուն հիմնավորապես արտացոլել է գրաբարից աշխարհաբար անցումը, ինչպես նաև աշխարհաբար արևելահայերենի և արևմտահայերենի զարգացումը:

Հայերենի նկատմամբ լեզվական քաղաքականությունը ոչ միանշանակ էր ձևակերպվում տարբեր գաղթօջախների պարբերականների խմբագիրների, գրողների ու թարգմանիչների կողմից: Այդ մոտեցումները կարող էին լինել ինչպես ինքնուրույն և հայերենի ներքին զարգացման օրինաչափություններին բնորոշ, այնպես էլ պայմանավորված էին ընդունող երկրի լեզվական առանձնահատկություններով, խմբագիրների լեզվական գիտելիքներով և աշխարհայացքով: Տվյալ ժամանակի մասնավորապես թարգմանական գրականությունն ուսումնասիրելիս արձանագրում ենք ինչպես լեզվական փոփոխություններն, այնպես էլ պարբերականների քաղաքականությունն այդ հարցերի առնչությամբ:

Հարկ է նշել, որ եթե առաջին շրջանում հիմնական որոնումները վերաբերում էին գրաբարի և աշխարհաբարի ընտրության խնդրին, ապա 19րդ դարի երկրորդ կեսին հարցը տեղափոխվում է տարբեր գաղթօջախներում ձևավորվող արևելահայերենի և արևմտահայերենի կայացման խնդիրներին, որոնց լուծումով պայմանավորված էր ընթերցողների շրջանում թարգմանական գրականության տարածման հաջողությունը:

Նկարագրելով հայ գրականության զարգացման միտումները հայկական համայնքներում՝ Հ. Դավթյանը գրում է. «Գրականությունը նույն ընթացքով էր զարգանում նաև Կ. Պոլսում և Ջմյուռնիայում: Ինչպես գրականության վիճակը, այնպես էլ նրա դերի ու կոչման վերաբերյալ տիրապետող հայացքները քիչ քանակ էին տարբերվում Մխիթարյաններից: Այդպես էլ պետք է լիներ, որովհետև նախ՝ այդ կենտրոնները կապված էին միմյանց հետ և ենթակա էին փոխադարձ ազդեցության. ապա ինչպես Վենետիկ-Վիեննայի ու Կ. Պոլիս Ջմյուռնիայի, այնպես էլ Մոսկվայի ու Թիֆլիսի և հայկական մյուս մշակութային կենտրոնների գրականությունն ու միտքը միևնույն ժամանակի սոցիալատեսական նույնանման հարաբերությունների կնիքն էին կրում... Մի Հովհան Վանանդեցի Կ. Պոլսում ու Ջմյուռնիայում կամ մի Թադիադյան Կալկաթայում...» (6): Տարբերությունն այն էր, որ Մխիթարյանների գործունեության վրա ազդում էր Եվրոպայի կաթոլիկական միջավայրը, Կ. Պոլսում գերիշխում էր հայ եկեղեցու ազդեցությունը, Ջմյուռնիայում՝ բողոքականների ազդեցությունը: Կրոնական ազդեցությունների և աղանդների գործունեության առումով հետաքրքրական է նշել հետևյալ փաստը: Խոսելով «Ազգարար Բիւզանդեան»ի (1840-1843) խմբագիր, թարգմանիչ, Նյու Յորքում

խմբագրական գործունեություն իրականացնող առաջին հայերից մեկի՝ Խաչատուր Օսկանյանի մասին՝ ասվում է՝ «...իր հողվածներով Օսկանյանը ամերիկյան մամուլի էջերից պայքարում էր անդրօվկիանոսյան միսիոներների կործանիչ քաղաքականության դեմ, որոնք, Թուրքիայում ներկայանալով որպես հայերի փրկիչներ, սեփական հայրենիքում ամբաստանում էին նրանց, հայտարարում կիսավայրենիներ, որոնց լուսավորելու առաքելությունն, իբր, ընկած է ամերիկացիների վրա» (17):

Թերևս, այս ամենով պայմանավորված, արդարացի է այն միտքը, որ, մասնավորապես Հնդկաստանում է ձևավորվում առավել ինքնուրույն գրական միտք և գաղափարախոսություն:

Հետազոտությունը հիմքում ընկած են Եվրոպայի, Ռուսական և Օսմանյան կայսրությունների, Հայաստանի և Հնդկաստանի համայնքների առավել ակնառու պարբերականների գրականության օրինակները:

Հնդկահայ մամուլի լեզվական քաղաքականության առումով մի քանի անդրադարձ պետք է կատարել. քանի որ լեզվական քաղաքականությունը մեծ հաշվով ամրագրվում է օրենսդրական դրույթներով, ինչպես մեր ժամանակներում ՀՀ Սահմանադրությամբ և Լեզվի մասին Օրենքով, հետաքրքիր է հայոց առաջին սահմանադրության անդրադարձը. «Որոգայթ Փառացը» (1773) լեզվի մաքրումը օտար բառերից, տարատեսակ չափման միավորներից կարևոր է համարում, որպեսզի բոլոր հայերը կարողանային իրար ճիշտ ընկալել: «Որոգայթ փառացում» ասվում է՝ «Որպես սովորութիւն է՝ ամենայն գործի նախ ճանաչել անունք և չափատրութիւնք և կշիռ, այսպէս հարկաւոր է մեզ անուանիլ բացատրութիւն անուանց, որ յինէն ռամկօրէն անուանեցեալ...» (19): Այս միտքը հիմնավորելով շարունակում է՝ «.....զի յաւելի քան թէ չորս հարիւր ամաւ ժամանակաւ վարելով մեք յազգս Հայոց կեանս ծառայութեան, և ի պատճառէ անտերունչութենէ խափանեցան տունք հրահանգաց և ուսումն արանս մերոց և շաղախեցաւ լեզու մեր ընդ բառբառս այլ ազգաց և արգելեաց իմացումն ընթերցման պատմութեանց մերոց...» (19): Անդրադառնալով հնդկահայ համայնքում ձևավորվող թարգմանական գրականությանը՝ «Անգլիացի հեղինակներ Ադիսոնի և Ստիլի պատմվածքները Ազդարարում» հողվածում Մ. Ասլանյանը գրում է, «Ազդարարում տպագրվում են ոչ թե Կորնելի, Ռասինի, Բուալոյի կամ անգլիացի կլասիցիստ Ջ. Միլտոնի երկերը, ինչպես Մխիթարյանների տպագիր օրգան «Բազմավեպում» էր, այլ անգլիացի լուսավորիչներ, լրագրողներ Ադիսոնի և Ստիլի «արևելյան պատմվածքները» և Թոմաս Դեյի արկածային վիպակը: Վենետիկում, Մխիթարյանների դպրոցում, աշակերտների ուժերով բեմադրվում են պատմական բովանդակության պիեսներ: Կայկաթայում XVIII դարի 20ական թթ. բեմադրվում է Մարգար

Մկրտչյանի առաջին հայ կենցաղագրական կատագրությունը՝ «Խորադիմայ դժոռություն» (2):

Հնդկահայ պարբերականները բացահայտորեն չէին անդրադառնում ազգային գաղափարներին և քաղաքականությանը, սակայն այնպիսի ստեղծագործությունների թարգմանություններում, ինչպիսիք են Թոմաս Դեյի «Փոքրիկ Ջեյի պատմությունը», Լորդ Չեսթերֆիլդի «Խրատք առ որդի իւր» և այլն, շեշտը դրվում էր վարքագծի հատուկ հասկացությունների և չափանիշների վրայ, որոնք գովերգում էին ազգային պատկանելությունն ու բարոյական արժեքները: «Ազդարարի», «Ազգասերի» և այլ պարբերականների թարգմանական գործերում հաճախ բացակայում էին ինչպես հեղինակի, այնպես էլ թարգմանչի մասին տեղեկությունները: Ինչպես կտեսնենք, «անստորագիր» աշխատությունների սկզբունքը բնորոշ էր տվյալ ժամանակաշրջանի ինչպես եվրոպական պարբերականներին, այնպես էլ հայալեզու պարբերականներին տարբեր համայնքներում:

Վենետիկի Միխիթարյանները, ովքեր հանդես էին գալիս ի պաշտպանություն դասականության և կաթողիկե կղերականության, այնուամենայնիվ, մեծ ծառայություն մատուցեցին հայ գրականությանը, թարգմանելով բազմաթիվ հայագիտական, պատմական, բանասիրական, աշխարհագրական, կրոնաբարոյախոսական գրքեր և, իհարկե, համաշխարհային գեղարվեստական գրականություն լավագույն նմուշները: «Բազմավեպի» խմբագիրները տարբեր հոդվածներով ներկայացրել են իրենց դիրքորոշումը հայերենի նկատմամբ: Նշենք մի քանիսը. Բարսեղ Սարգիսեանի «Աշխարհաբարը գրաբարի ձեռքով զարգացնելու և կանոնաորելու և գրաբար լեզուն աշխարհաբարի մեջ կենդանացնելու խնդիրն» (5), հոդվածում հեղինակը հիմնականում կարևորում է գրաբարի կենսունակությունը: Մյուսը Գաբրիել Այվազովսկու «Ազգային լեզուն պահելու վրայ» հոդվածն է, որտեղ գրում է՝ «Իրաւ, կըսեն, մեր գրաբարը պէտք չէ ձգել, կամ կուրցընել. բայց աշխարհաբարին ալ ամեննին կանոն մը դնել չուզելը ըսել է թէ գրաբարը ջանացուի այնչափ ծաղկեցընել ու այնպէս հասարակաց լեզու ընել որ ամէն մարդ գրաբար խօսի ու գրաբար շարադրէ: Ատիկայ շատ գովելի ու փափաքելի բան է, բայց մէ դք որ գրեթէ անկարելի է» (4): Միտքը շարունակելով ավելացնում է՝ «Իրաւ է որ աշխարհաբարը գրաբարէն շատ պակասաւոր, աղքատ ու խառնակ է. բայց աս բանս բաւական չէ՝ իբրև անպիտան մէկդի ձգելու զանիկայ. պէտք է մաքրել. կոկել, և ըստ կարի գրաբարին մօտեցընել, որով թէ՛ գրաբարը իր յարգին ու ազնուութեանը մէջ մնայ, և թէ՛ աշխարհաբարը ազնուանայ» (4):

«Բազմավեպում» լեզվական խնդիրներն առավել այլ կերպ էին ընթանում, մի կողմից, ընդգրկում էր գրական լեզվի խնդիրները, մյուս կողմից լեզուն, անհարկի օտարաբանությունների խնդիրները՝

հունաբանություն, լատինաբանություն, իսկ արևելյան մամուլում՝ խնդիրը հիմնականում ռուսաբանությունն էր: «Բազմավեպը» խիստ հետևողական էր բովանդակային հարցերում իր ընթերցողի հետ տևական հարաբերություններ կառուցելու նպատակով մեծապես զբաղվում էր լեզվի՝ որպես հաղորդակցման միջոցի կամ «աշխատանքային գործ, իքի» ընտրությունը շատ էր կարևորում որպեսզի հասկանալի լիներ հասարակության բոլոր շերտերի համար: «Բազմավեպի» հրատարակման սկզբնական շրջանում առավել մեծ էին այն մեծանուն գիտնականներն, ովքեր պնդում էին, որ պետք է հավատարիմ մնալ գրաբարին, քանզի աշխարհաբարը միայն «ռամկօրեն» էր, սակայն ի վերջո, փոխարինվում է արևմտահայերենով: Պատանիներին ընթերցանության բազմաբովանդակ գրքեր մատուցելու նպատակով Վենետիկի Մխիթարյան միաբանությունը սկսում է թարգմանաբար հրատարակել աշխարհաբար պատմվածքներ և վիպակներ: Շնորհիվ օտար լեզուների իմացության, «Բազմավեպի» խմբագիրները թարգմանում և տպագրում էին գերմանական, իտալական, ռուսական, անգլիական, ֆրանսիական գրականության հանրահայտ գործերը ինչպես բնագրերից, այնպես էլ միջնորդավորված:

Ամփոփելով «Բազմավեպի» դիրքորոշումը մեջբերենք Գ. Այվազովսկու «Բառագնություն աշխարհիկ լեզուի» անտպագիր հոդվածը՝ Հ. Իրիցյանի վերլուծությամբ՝ «Հեղինակն իր նախապես հրատարակված հոդվածներում տեսական դրույթներով հինավորած լինելով աշխարհաբարի զարգացման ուղին, այստեղ արդեն փորձում է շրջանառության մեջ դնել իր ժամանակի աշխարհաբարը որպես գրական լեզու» (11):

Հայկական տարբեր գաղթօջախներում նախ փորձում էին խոսակցական գրաբարի բառապաշարը մաքրել «օսմանցոց», «պարսկերեն, ռուսերեն և այլ լեզուների անհարկի փոխառություններից.... Գրաբար գիտական ոճի մեջ, հատկապես նրա ատենական տարբերակում անհարկի փոփոխություններ գրեթե չկան.... Տվյալ ժամանակամիջոցում առավել մաքուր գիտական ոճի պահանջը առաջ էր գալիս այն բանից, որ արևմտահայ գիտական ոճը ավելի հայացի ու մշակված արտահատություն ուներ» (9):

Թարգմանական սկզբունքներն ու լեզվական քաղաքականությունն առավել ընդգրկում ներկայացնելու համար որոշակի անդրադարձ պետք է անել արևելահայ մամուլին: 1816 թվին Աստրախանում հրատարակվում է արևելահայ առաջին թերթը՝ «Արևելեան ծանուցմունք», որը ռուսական «Վոստոչնիե իզվեստիա» թերթի հայերեն թարգմանությունն էր՝ երկլեզվյա: Ռուսերեն թերթը հիմնել էր 1812 թվականին գերմաներենի ուսուցիչ Իոսիֆ ֆոն Վայսբրոպֆենը 1813 թվին: Տեսնելով տեղի մեծաքանակ հայ բնակչությունը և ցանկանալով թերթի գոյությունն ապահովել, որոշում է այն

երկլեզվյա դարձնել: Թարգմանական միտումներից խոսելիս, նշվում է, որ «տեղի հայ ընթերցողների հետ կարող էր կապվել գերազանցապես արձակի բաժնում գետեղված նյութերով, որոնցից շատերը բարոյադաստիարակչական նպատակառդովածություն ունեին: Շաբաթաթերթի գրական նյութերը թարգմանություններ էին զանազան պարբերականներից կամ ուսումնական ձեռնարկներից, դրանց հեղինակները և աղբյուրները չէին նշվում» (17): Թարգմանություններն հիմնականում գրաբարով են, երբեմն պարզեցված:

Թարգմանությունների արևելյան նյութն առավել համակողմանի ներկայացնելու համար հարկ է անդրադառնալ Թիֆլիսում լույս տեսած «Կովկաս» (1846-1847) պարբերականին: Այստեղ մասնավորապես կարևոր է եղել երիտասարդ գրող Գաբրիել Պատկանյանի գործունեությունը: «Կովկասում» տպագրված Կոնիլովի առակները (13) հայերեն առաջին թարգմանություններն են «Բազմավեպի» 18431844 թվականի մեկական տպագրությունից հետո: Էջերում տպագրվել են ոչ միայն ռուսերենից, այլև անգլերենից և գերմաներենից թարգմանված գործեր, ինչպես օրինակ գերմանացի գրող Ավգուստ ֆոն Կոեբուի «Ադելայիդի» (*Adelheid von Wulfingen* (1789) գրաբարյան թարգմանությունը (14) (15), որի ամբողջական անստորագիր տարբերակը տեղ է գտել նաև Աբովյանի աշխատություններում (1):

Լեզվական քաղաքականության առիթով հետաքրքիր է մեջբերել Պատկանյանի մոտեցումը, ըստ որի, խմբագրությունը հատուկ խորհրդով ուսյալների համար գրում էր գրաբար, իսկ մյուս ընթերցողներին ասվածի իմաստը հասկանալի դարձնելու նպատակով՝ խոսակցական լեզվով: «Կովկասում» են տպագրվում նաև Լազարյան և Ներսիսյան դպրոցների ուսանողների գրական գործերն ու թարգմանությունները: «Ճիշտ է, գրաբարը պահպանում էր տիրակալի իր հեղինակությունը, բայց շաբաթաթերթում տպագրված գրական գործերի, մանավանդ թարգմանական արձակի լեզուն արդեն ստացել է աշխարհականացող գրաբարի որակը» (17): Հետաքրքիր անցում է ներկայացնում Պատկանյանի «Արարատ» պարբերականը, որի առնչությամբ Պատկանյանի կենսագիրը գրում է. «որպես առաջին ռուսահայ աշխարհաբար շաբաթաթերթ...», ոչ թե լրագիր պիտի համարվեր, կամ օրագիր, այլ մի ընթերցարան, որ պարզ, հանրամատչելի լեզվով բնական և հասարակական ընդհանուր գիտելիքներ էր տալու իր սկսնակ ընթերցողներին» (18): Հատկանշական է, որ ցարական գրաքննության կողմից «Կովկասի» փակվելուց հետո Գաբրիել Պատկանյանը հիմնում է «Արարատ» (1851-1852) պարբերականը, որտեղ լեզվաքաղաքականությունը ընտրությունը կատարում է հոգուտ արևելահայ աշխարհաբարի: Մխիթարյանների «Եվրոպա» պարբերականի (1847-1863)

խմբագիրները անվանել են հայության «մեկ մեծ մասի մտավոր ազնվության գործիքը, որը ոչ միայն լուսաբանում է տեղի հայերի կյանքը, այլև աշխարհաբարի ոճերն ու ասացվածքներն օգտագործելով ավելացնում է հայոց լեզվի զարդն ու հարստությունը» (7):

«Կովկաս» և «Արարատ» պարբերականների հոդվածները ևս հաճախ անստորագիր էին: Արարատն աչքի է ընկեր գրական գեղարվեստական արձակ և չափածո բազմաբովանդակ գործերով: Ինչպես նշվում է «Հայ պարբերական մամուլը 18-19րդ դդ» աշխատության մեջ՝ «տպագրելով Ռ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի բանաստեղծությունները, «Արարատի» խմբագիրը վավերացնում էր հայ գրականության զարգացման միակ տրամաբանական ուղին՝ անցումը գրաբարից աշխարհաբարին» (17): Ամբողջացնելով Պատկանյանի մոտեցումները լեզվական խնդիրների առնչությամբ, հարկ է մեջբերել «Արարատի» առաջին համարում տեղ գտած Պատկանյանի հոդվածը՝ «Նոյն շնորհակալութեան ձայնն կամեցաւ Վրաստանի կողմանց Հայոց ևս լսելի առնել. նորա ձայնն լսվեցաւ Կովկաս Լրագրի մէջն: 1846 և 1847 թիւքն շարունակվեցան: Այլ որովհետև լեզուն չէր աշխարհաբար, և չէր ամենեցուն հսկանալի, վասնորոյ և խափանվեցաւ. Բայց գոհութիւն նախախնամութեան. այս խափանումն Կովկաս լրագրի՝ չ'վերջացուց Հայոց Ընթերցասիրաց ջերմեռանդութիւնն. այլ միայն ժամանակ տուեց Կովկաս Լրագրոյ կերպն փոխել, և միւսանգամ խափանվելոյ պատճառներն հեռացնել. Ռուսաստանի Հայոց ցանկալի էր ունենալ մէկ Հայերէն լեզուաւ տպագրեալ Լրագիր... Փոխանակ Կովկաս անուան Արարատ անուն տալ Լրագրին՝ էր իմ և բազմաց ցանկութիւնն... և նպատակ հրատարակելոյ նորա՝ Հայագրի ընթերցասիրաց օգուտն էր» (3):

Հիշատակված պարբերականները դեռևս մանկապատանեկան չէին, սակայն դրանց առաջացումը և լեզվաքաղաքական մոտեցումները նախադրյալներ ստեղծեցին հետագայում նոր, այդ թվում նաև մանկապատանեկան գրականության ուղղվածություն ունեցող պարբերականների համար: Երբ գրաբարի և աշխարհաբարի պայքարում գրաբարը իր տեղը զիջել էր աշխարհաբարին, ինչպես տեսանք, 19րդ դարի կեսերից լեզվական խնդիրները տեղափոխվեցին արևմտահայերեն և արևելահայերեն լեզուների կանոնարկման փուլ: Այստեղ մեծ դեր ունեն արդեն առաջին մանկապատանեկան պարբերականները, մասնավորապես, «արևելահայ մանուկների անդրանիկ ամսագիրը» (17) «Աղբյուրը»: Այն «մեծ ծառայություն է մատուցել թարգմանական գրականության զարգացման գործին, որ աշխարհին կապող զարկերակ եղավ մանկական գրականության մեջ...» (12): Ինչպես նշում է Հովհաննես Թումանյանը, ով նաև «Աղբյուրի» ակունքներում է եղել՝ «Հայոց գրական լեզվի խնդիրը» հոդվածում. «Աշխարհաբարի ու գրաբարի կովին հաջորդել է նոր խնդիր՝ թուրքսահայ ու



ռուսահայ գրական լեզուների խնդիրը, էս գրական լեզուների և ժողովրդական բարբառի հարաբերության և լեզվական փոխառությունների խնդիրը, ուրիշ խոսքով դրված է մեր գրական լեզուն վերջնականապես մի ճանապարհի վրա հաստատելու, միանգամ ընդմիջտ նրա բնավորությունն ու սահմանները որոշելու խնդիրը» (10):

### **Եզրակացություններ**

Այսպիսով, առաջին պարբերականների խմբագիրների համար առաջին շրջանում հիմնական խնդիրն էր գրաբարի մաքրումն օտարաբանություններից և գիտական որակյալ լեզվի մշակումը՝ օգտվելով լեզվի ներքին հնարավորություններից: Այս փուլը համեմատաբար կարճ տևեց և հետագայում հարցն առնչվում էր գրաբարի և աշխարհաբարի ընտրության խնդրին: 19րդ դարի երկրորդ կեսին, սակայն, լեզվաքաղաքականության հարցը գերազանցապես տեղափոխվում է տարբեր գաղթօջախներում ձևավորվող արևելահայերենի և արևմտահայերենի կայացման խնդիրներին, որոնց լուծումով պայմանավորված էր թարգմանական գրականության հաջողությունը: Կարելի է ենթադրել, որ պարբերականների ինչպես բնագրային, այնպես էլ թարգմանական գրականությունը լեզվաքաղաքականության և գրապատմական ընթացքի ինքնատիպ և անմիջական վավերագիրն է:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Աբովյան Խ. (1948), Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 405 էջ:
2. Ասլանյան Մ. (1985), Անգլիացի հեղինակներ Ադիսոնի և Ստիլի պատմվածքները «Ազդարարում», Երևան, Պատմաբանասիրական հանդես, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, հ. 1, 239 էջ:
3. Արարատ (1850), թիվ 1, 16 էջ:
4. Բազմավեպ (1843), թիվ 5, 80 էջ:
5. Բազմավեպ (1890), թիվ 4, 160 էջ:
6. Դավթյան Հ. (1967), Հայ Գիրքը 1801-1850 թվականներին, Երևան, 536 էջ:
7. Երոպա, Վիեննա (1851), հ. 9, 36 էջ:
8. Զարպիհանայան Գ. (1889), Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, դար Դ-ԺԳ, Վենետիկ, 783 էջ:
9. Թաղևոսյան Ե. (1988), «Կովկաս» պարբերականի դերը արևելահայ գիտական ոճի պատմության մեջ», Լրաբեր Հասարակական գիտությունների, Երևան, հ. 8, 99 էջ:

10. Թումանյան Հ (1995), Երկերի Լիակատար Ժողովածու, հ. 7, Երևան, 718 էջ:
11. Իրիցյան Հ. (2019), Գաբրիել Այվազյանի «Բառագնություն աշխարհիկ լեզուի», Բանբեր Մատենադարանի, թ. 27, Երևան, 444 էջ:
12. Կարապետյան Լ. (2008), «Ոսկեդարից» մինչև... 21-րդ, Երևան, 312 էջ:
13. Կովկաս ( 1846), թիվ 15, 54 էջ:
14. Կովկաս (1846), թիվ 49, 4 էջ:
15. Կովկաս (1847), թիվ 1, 4 էջ:
16. Հակոբյան Պ. (1993), Բազմավեպի մեկուկես դարը, Բանբեր Երևանի Համալսարանի, Երևան, 3 (81), 202 էջ:
17. Հայ պարբերական մամուլի պատմություն (2006), հ. 1, Գահիրե, 701 էջ:
18. Նազարյան Շ. (1956), Գաբրիել Պատկանյանի կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը, Բանբեր Մատենադարանի, Երևան, թիվ 3, 457 էջ:
19. Շահամիրեան Հ. (1773), Գիրք անուանեալ որոգայթ փառաց, Մադրաս, 339 էջ:

#### REFERENCES

1. Abovyan Kh. (1948), Erkeri liakatar jhoghovac'ow /Complete Collection of Works/. V. 2, Publishing House of the USSR Academy of Sciences, Yerevan, p. 405.
2. Aslanyan M. (1985), Angliaci heghinakner Adisoni & Stili patmvac'qneri' «Azdararowm» /English authors Addison and Steele's short stories in "Azdarar"/. Yerevan. Historical and Philosophical Journal, Publishing House of the USSR Academy of Sciences. v. 1., p. 239.
3. Ararat (1950), No. 1, p.16.
4. Bazmavep (1843), v, 5, p. 80.
5. Bazmavep (1890), v. 4, p. 160.
6. Davtyan H. (1967), Hay Girqy' 1801-1850 t'vakannerin /The Armenian Book in the years 1801-1850/. Yerevan., p. 536
7. Ewropa /Europe/. Vienna (1851) v. 9, p. 36.
8. Zarphanalyan G. (1889), Matenadaran haykakan t'argmanowt'eanc naxneac, dar D-JhG /Repository of Ancient Armenian Translations, 4th-13th Centuries/. Venice., p. 783.
9. Tadevosyan E. (1988), «Kovkas» parberakani dery' ar&elahay gitakan otwi patmowt'yan mej» /The Role of "Kovkas" Periodical in the History of

- Eastern Armenian Scientific Style"/. Bulletin of Social Sciences, Yerevan, p. 99.
10. Tumanyan H. (1995), Erkeri Liakatar Jhoghovac'ow /Complete Collection of Works/. v 7. Yerevan, p.718.
  11. Iritsyan H. (2019), Gabriel Ayvazyani «Bar'aznnowt'iwn ashxarhik lezowi» /The Manuscript “Word-Study of the Secular Language” Gabriel Ayvazyan as Work Enhancing the Spread of Modern Armennian (Ashkharhabar)/, The Bulletin of Matenadaran. v. 27, Yerevan, p. 444.
  12. Karapetyan L. (2008), «Oskedaric» minch&... 21-rd /From the “Golden” Century to... the 21st/. Yerevan, p.312.
  13. Kovkas (1846), v. 15, p. 54.
  14. Kovkas (1846), v. 49, p. 4.
  15. Kovkas (1847), v. 1, p. 4.
  16. Hakobyan P. (1993), Bazmave'pi mekowkes dary' /One and a Half Century of Bazmavep/. Herald of Yerevan University, Yerevan, p .202.
  17. Hay parberakan mamowli patmowt'yown /The History of the Armenian Periodical Press/ (2006), v. 1, Cairo, p. 701.
  18. Nazaryan Sh. (1956), Gabriel Patkanyani kyanqn ow grakan-hasarakakan gorc'owneowt'yowny' /The Life and Literary-social Activity of Gabriel Patkanyan/, The Bulletin of Matenadaran, Yerevan, No. 3, p. 457.
  19. Shahamirian H. (1773), Gabriel Patkanyani kyanqn ow grakan-hasarakakan gorc'owneowt'yo'wny /A Book Called Snare of Glory/. Madras, p. 339.

**Вардун Балоян**

**ЯЗЫКОВАЯ ПОЛИТИКА И ТЕНДЕНЦИИ ПЕРЕВОДА В АРМЯНСКИХ  
ПЕРИОДИЧЕСКИХ ИЗДАНИЯХ XIX ВЕКА НА МАТЕРИАЛЕ  
ПЕРЕВОДНОЙ ЛИТЕРАТУРЫ**

**Заключение**

**Ключевые слова и выражения:** языковая политика, периодические издания, перевод, литература, армянский язык, письменность, перевод.

В статье мы рассмотрели языковую политику армяноязычной периодики XIX века, которая характеризовалась влиянием переводческих тенденций и принципов, сформировавшихся в разных языковых средах и нашедших свое отражение в художественных переводах. Некоторые положительные культурно-образовательные сдвиги были обеспечены в армянских общинах, находящимся в сложнейшей геополитической ситуации, благодаря чему открывались ряд армянских школ и развивалась периодическая печать. Для проведения просветительской работы

необходимо мыло создавать светскую литературу, особенно для детей и юношества. Наряду с созданием новой литературы армянская научная мысль, имеющая старинные переводческие традиции, берется к переводу ценных произведений из мировой литературы. С одной стороны, исследование литературы дает возможность обосновать ход литературно-исторического развития армянского языка в контексте XIX-ого века, а с другой стороны, путем изучения переводной литературы, сформировавшейся в разных языковых средах, можно изучать и тенденции в переводоведении.

Этот период включал сначала переход от классического армянского языка к современному армянскому языку, затем развитие восточноармянского и западноармянского вариантов, что непосредственно отразилось на языке переводной литературы. Эти процессы происходили в условиях отсутствия единого армянского государства, а языковая политика в отношении армян неоднозначно формулировалась редакторами, писателями и переводчиками периодических изданий в разных общинах.

В этом исследовании были использованы литературный и исторический метод, с помощью которых рассматривались историко-политические и социально-педагогические факторы, описуемые в различных статьях и исследованиях.

Мы пришли к выводу, что развитие периодической печати и переводная литература определили ход развития армянского языка в XIX-ом веке.

Varduhi Baloyan

## LANGUAGE POLICY AND TRANSLATION TRENDS IN THE 19TH CENTURY ARMENIAN PERIODICALS

### Conclusion

**Key words and expressions:** Language policy, periodicals, translation, literature, Classical Armenian, Eastern Armenian, Western Armenian, communities.

In the article, we discussed the language policy of the Armenian-language periodicals of the 19th century, which was characterized by the influence of translation trends and principles formed in different language environments and reflected in literary translations. Some positive cultural and educational changes were ensured in the Armenian communities previously suffering in harsh geopolitical situations. Thanks to those changes a number of Armenian schools and printing houses were opened, and periodical press contributed to the development of translated secular literature, especially for children and young

readers. Along with creating original literature, Armenians having long history of translations, turned to the translation of valuable pieces of world literature. The study of literature provided an opportunity to validate the course of the literary-historical development of the Armenian language in the context of the 19<sup>th</sup> century.

The period was marked first by the transition from Classical Armenian to Modern Armenian, then the development of the Eastern and Western Armenian branches, which was directly reflected in the language of the translated literature. These processes took place in the absence of a unified independent state, and the language policy had different interpretations by the editors, writers and translators of periodicals.

In this study, the literary and historical method was used, with the help of which the historical-political and social-pedagogical factors described in various articles and studies were considered.

We came to the conclusion that the development of periodical printing and translation literature determined the development of the Armenian language in the 19<sup>th</sup> century.

**Վարդուհի Բալոյան** - ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ հեքիաթագիտություն, գրականագիտություն, թարգմանաբանություն, կառուցվածքային լեզվաբանություն, արհեստական բանականություն: Հեղինակ է մեկ տասնյակից ավել գիտական հոդվածների: [varduhi.baloyan@edu.isec.am](mailto:varduhi.baloyan@edu.isec.am).

**Вардуй Балоян** - Соискатель Института литературы им. М. Абеяна, НАН РА. Научные интересы: фольклор, литературоведение, переводоведение, структурная лингвистика, искусственный интеллект. Автор более одного десятка статей. [varduhi.baloyan@edu.isec.am](mailto:varduhi.baloyan@edu.isec.am).

**Varduhi Baloyan** – PhD Student at the Institute of Literature of NAS of RA. Scientific interests: folklor, literary studies, translation studies, structural linguistics, artificial intelligence. She is an author of more than a dozen articles. [varduhi.baloyan@edu.isec.am](mailto:varduhi.baloyan@edu.isec.am).

*Խմբագրություն է ուղարկվել 14.11.2023թ.  
Հանձնարարվել է գրախոսության 23.11.2023թ.  
Հրատարակման է ներկայացվել 10.01.2024թ.*